ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР. БИОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ АРМЕНИИ

т. XXVI, № 1, 1973

УДК 57+634.117:479.25

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Է. Ս. ՄՈՐԻԿՅԱՆ

ՊՏՂԱՏՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ V—XIX ԴԱՐԵՐԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայաստանի տերիտորիայում պտղատու բույսեր մշակվում են շատ վաղուց։ Երկրի էնեոլիթյան բնակավայրերում կատարված պեղումներից հայտնաբերվել են խաղողի, ծիրանի, դեղձի, կեռասի կորիզներ, որոնք ունեն շուրջ 6000 տարվա հնություն։ Հայաստանի ելբեմնի զարգացած պտղաբուծության գոյությունը հաստատվում է նաև հայ և օտարազգի մի շարք հեղինակների վկայություններով։ Այդ մասին արժեքավոր տվյալներ կան անտիկ շրջանի հույն պատմիչներ՝ Հերոդոտի, Քսենոֆոնի, Ստրաբոնի, հայ մատենագիրներ՝ Ագաթանգեղոսի, Մովսես Խորենացու, Փավստոս Բյուզանդի, Անանիա Շիրակացու և այլոց աշխատություններում։ Դեռևս վաղ միջնադարից (V—VII դարեր) Հայաստանը հռչակված է եղել իր ընդարձակ այգեստաններով, գինեվետ գավառներով, անուշահամ գինով, բարձրարժեք խաղողով, ծիրանով, դեղձով։ Անցյալում պտղաբուծությունը զարգացած էր պատմական Արարատ, Տարոն, Վասպուրական, Սյունիք, Բարձր Հայք, Պարսկահայք, Ծոփք և այլ նահանգներում։ Ընդարձակ այգիներով էին շրջապատված երկրի հնագույն քաղաքները՝ Տիգրանակերտը, Զարեհավանը, Արտաշատը, Դվինը, Վաղարշապատը, Երվանդաշատը, Արմավիրը, Վանը, Երևանը։ Այդ բնակավայրերում մշակվում էին մի շարք պտղատու տեսակներ իրենց տասնյակ սորտերով։ Ընդհանուր առմամբ հայ հին գրականության մեջ պտղատու տեսակների նկարագրությունների ու նրանց կենսաբանության վերաբերյալ եղած նյութերի հանդիպում ենք պատմական բնույթի աշխատություններում, առակներում, բանաստեղծություններում, կրոնի, փիլիսոփայության, բժշկական և այլ կարգի գրվածքներում։

Հայաստանում տարածված պտղատու տեսակների մասին առաջինը հիշատակել է V դարի պատմիչ Ագաթանգեղոսը «Պատմություն հայոց» աշխատության մեջ։ Պտղատու տեսակներից այստեղ նշվում են դեղձենին, խնձորենին, տանձենին, սերկևիլենին, հոնը, ընկուզենին, նշենին, նռնենին, թզենին, թթենին։

V դարի հայ հեղինակների գրվածքներից հետաքրքիր է նաև Մովսես Խորենացուն վերագրվող «Յաղագս պիտոյից» կոչվող աշխատությունը։ Այստեղ, հայ գրականության մեջ առաջին անգամ, համառոտակի նկարագրվում են ձիթենին, արմավենին, խաղողի վազը, տրվում է նրանց օգտակարության և վնասակարության հարցերի բնութագիրը։ Այսպես, օրինակ, «Պիտոյից» գրքում ձիթենին ներբողված է բոլոր տեսակի ծառերից «պատվականագույնն ու փարթամն, իր առավելյալ աղնվականությամբ»։ Գովելի է նաև արմավենին, որն ունի «յարապուարձ պայծառութիւն և քաղցրաճաշակ պտուղ» բայց իր նշա-

նակությամբ չի կարող հավասարվել ձիթենուն, որովհետև նա «զանյոյս աղջամուղջ գիշերոյն գրեթէ անստուեր մթջորեայ գործի... և խառնի բժշկացն առողջական սպեղանիս բազում անգամ պախտաժեղություն փարատելով»։ Հակառակ դրանց, գրքում խիստ պարսավանքի է ենթարկվում խաղողի վազը, որովհետև արտաքինից իր համով ու դույնով գրավիչ է, բայց ներսից ունի դառն չարություն։ Այս չարությունը, ըստ երևույթին, նրա համար է, որ նա գինու աղբյուր է հանդիսանում, իսկ գինին էլ— բազմաթիվ չարիքների [10]։

Պտղատու բույսերի վերաբերյալ հետաքրքիր տեղեկություններ կան VII դարի հայտնի գիտնական Անանիա Շիրակացու «Աշխարհացույցում»։ Այստեղ հիշատակվում է ոչ միայն պտղատու մի շարք տեսակների անուններ, այլև նշվում է նրանց մշակության վայրը։ Այսպես, օրինակ, շագանակ մշակվում է Տարոնի նահանգում՝ Արածանիի հովտում, ձիթենի՝ Ուտիք նահանգում, նշենի՝ Տայքում, նոնենի՝ Սյունիքում (Արևիք գավառում), պիստակենի՝ Հայկական Տավրոսի Արեգունի փեշերին, սերկևիլենի՝ Տայքում և Գուգարքում, խաղող՝ Վասպուրականում, Գողթն գավառում։

Ժամանակագրական կարգով հաջորդ հեղինակը, որ անդրադարձել է մեզ հետաքրքրող թեմային, X դարի բանաստեղծ Գրիգոր Նարեկացին է։ Եթե մինչ այդ հայ հեղինակները պտղատու բույսերի մասին խոսել են իրենց պատմություններում և արձակ ստեղծագործություններում, ապա Նարեկացու մոտ այդ թեման առաջին անգամ հանդես է գալիս բանաստեղծության մեջ։

Նարեկացու «Գոհար վարդն վառ առեալ» գրվածքի հինգերորդ տողում կարդում ենք.

«Քրքում վակասիր պտուղն սնաներ խուռն տերևով»։

Ուրեմն հայ բանաստեղծին դեռևս X դարում հայտնի է եղել տերևի ասիմիլյացիոն դերը։ Մի բան, որը մինչև XIX դարի վերջերը չէր ընդունվում։ Այդ մասին ռուս մեծ գիտնական Կ. Ա. Տիմիրյազևը [9] ասում է. «Դարերի ընթացքում մարդը համառորեն հրաժարվում էր ընդունել տերևի անմիջական օգտակարությունը... տերևը շարունակում էր համարվել շքեղ, բայց անօգուտ զգեստի թեթևամիտ փառքը։ Այնինչ, տերևն արմատի նման՝ անհրաժեշտ է բույսի սննդառության գործում»։

Ա. Շ. Մնացականյանը [8], անդրադառնալով Գր. Նարեկացու այդ նույն մտքին, գրում է. «Տվյալ հարցի արծարծումը բանաստեղծի մոտ պատահականություն չէ։ Այս գրված է մի այնպիսի հոչակավոր անձնավորության կողմից, որը հավասարապես վայելել է թե՛ խոշոր բանաստեղծի, թե՛ մեծ գիտնականի և թե՛ հոչակավոր ուսուցչի փառքը»։ Նարեկացուն, որպես բնությունը սիրող բանաստեղծի, անշուշտ հետաքրքրել է առօրյա աշխարհը։ Եվ ահա նա նկատում է, որ զանազան պատճառներից տերևազրկված ծառի մոտ պտուղները լինում են թերզարգացած, դժգույն ու անհամ։ Սլնելով դրանից, հեղինակը եզրակացնում է, որ տերևը ինչ-որ ձևով պտուղներին սնունդ է մատակարարում։ Հենց դրանով էլ նա հանգում է մի այնպիսի ճշմարտության, որն իր գիտական ձևակերպումն ստացավ նրանից 900 տարի հետո։

Պտղատու բույսերի կենսաբանական առանձնահատկությունների վերաբերյալ որոշ տվյալներ կան նաև XIV դարի գիտնական Գրիգոր Տաթևացու «Հարցմանց գրքում»։ Սա, ինչպես անունը ցույց է տալիս, հարց ու պատասխանի ձևով գրված ստվարածավալ աշխատություն է, որի նյութերի մի մասը հեղինակը հավաքել է ժամանակի գրականության տվյալներից, իսկ մյուսը՝

գրել է ինքը։ «Հարցմանց գրքում» պտղատու տեսակներին վերաբերվող նյութերը տրված են IV հատորի «Յաղագս բուսոց և տնկոց» վերնագրի տակ։ Այստեղ Տաթևացին հարցնում է, թե ինչո՞ւ սկզբում ծառի ծաղիկն է երևում, իսկ հետո՝ պտուղը, և տալիս է հետևյալ պատասխանը։ «Նախաշաւիղ է ծաղիկն պտղոյն, որպես ի մեզ նախ զգայնականն երևի, ապա բնականն»։ Հետո, վկայակոչելով իրեն հայտնի չորս տարրերին, ավելացնում է. Ծաղիկն առաջանում է ջերմությունից, որ նախ շարժվում է, հետո երևում։ Եվ պտուղն ջրից... տերևն օդից, իսկ ծառի փայտանյութը՝ հողից։ Շարունակելով հարցերը հեղինակը իր առաջ խնդիր է դնում պարզելու, թե որտեղից են առաջանում պտուղների գույնը, հոտը, համը ու պատասխանում է. «արեգակից... խնձորը մեզ օրինակ,— ասում է նա,— Զի ի չորս տարրէ է գոյացել»։ Այն աճել է հողում, սնվել ջրով, օդից համ ստացել և արևից՝գույն։ Տաթևացին ավելի ուշադրավ խնդիր է առաջ քաշում, թե ինչո՞ւ սերմերն ամռանն ու ձմռանը չեն ծլում. և պատասխանում է, որ ամառը շատ շոգ է, դրա համար չորանում է, իսկ ձմեռը խիստ ցուրտ է՝ սառեցնում է։ Բայց գարնանն ու աշնանը ջերմությունը և խոնավությունը բավարար են, դրա համար էլ սերմերը ծլում են։ Չորությունը ու ցրտությունը խանգարում են բուսական օրգանիզմի առաջացմանը, իսկ ջերմությունը և խոնավությունը՝ օգնում։ Այստեղ ուշագրավ է այն, որ հեղինակը շոշափում է լուսային ռեժիմի խնդիրը։ Ահա հիմնականում սրանք են Գրիգոր Տաթևացու կողմից արծարծված հարցերը, որոնց պատասխանները տրվում են իդեալիստորեն։

Հետագայում նման մտքեր արտահայտում է նա XV դարի հեղինակ Հովհաննես Երզնկացին։ Ըստ նրա պատկերացման, բացի ջրից խաղողի, խնձորի, վարդի և այլ բույսերի բազմապիսի գույները, նրանց ծաղիկների հոտը, պտուղների համը հողի, ջերմության և սննդառության ազդեցության արդյունք են։ Ավելին, Երզնկացու կարծիքով ոչ թե աստված, այլ բնությունն է ստեղծել գույություն ունեցող բոլոր տեսակները։ Ինչպես տեսնում ենք, դեռևս XV դարի հայ հեղինակը մերժում է արարչագործության գաղափարը, կենդանիների ու բույսերի ծագման խնդիրը կապում բնության հետ, առաջ քաշում ուշագրավ տեսակետներ և դրանով բարձրանում իր դարից, դասվում ժամանակի առաջավոր մտածողների շարքը։

Ուսումնասիրվող թեման յուրահատուկ ձևով է արտահայտվում հայ բժշկագետների աշխատություններում։ Այդ տեսակետից առանձնապես ուշագրավ են միջնադարյան հայտնի գիտնական-բժշկագետներ Մխիթար Հերացու (XII դար) և Ամիրդովլաթ Ամասիացու (XV դար) աշխատությունները։

Մխիթար Հերացին 1184 թվականին գրել է բժշկագիտական մի աշխատություն, որը հայտնի է «Ջերմանց Մխիթարություն» անունով։ Այստեղ հեղինակը խոսում է սերկևիլի, նռան, ձիթապտղի, փշատի, ունաբի բուժիչ նշանակության մասին և տալիս այն ժամանակ հայտնի մի քանի սորտերի անուններ։ Այսպես, օրինակ, սերկևիլենուց հիշատակվում են քաղցր, կիսաքաղցր, թթու, իսկ նռնենուց՝ քաղցր և թթու սորտերը։ Անհրաժեշտ ենք համարում նշելու, որ հիշյալ տեսակների մոտ մինչև այժմ էլ այդ նույն սորտերը պաշտպանվել են և լայն տարածում ստացել։ Այս հանգամանքը կարող է որոշ նշանակություն ունենալ սերկևիլենու և նռնենու սորտերի պատմությունը ուսումնասիրելու համար։

Պտղատու տեսակների և նրանց սորտերի մասին Ամիրդովլաթ Ամասիացին խոսում է իր «Անգիտաց անպետ» աշխատության մեջ։ Ստորև բերվում են այդ գրքից մի քանի օրինակներ.

Միրանենի։ Մշակության մեջ հայտնի են ծիրանենու շատ սորտեր[1]։ Լավն այն է, որ խոշոր, քաղցր և դեղին լինի։ Թարմ ծիրանը օգտագործելիս հովացնում է ստամոքսը և ծարավը կտրում։ Ծիրանենին շատ երկրներում է տարածված, բայց «ն։ լաւն եւ աղեկն ի հայոց երկրին լինի»։

Դեղձենի։ Դեղձենիների մեջ լավն այն է, որ իր կորիզից շուտ է բաժանվում։ Սրա պտուղները կազդուրում են սիրտը, խաղաղեցնում ստամոքսի ջերմությունը, կտրում ծարավը։ Տերևներն օգտագործվում են որպես ճիճվահան միջոց, իսկ ծաղիկները՝ լուծողական։

Խնձորենի։ Բժշկության մեջ խնձորենու պտուղները օգտագործվել են շատ վաղուց։ Հայերի մոտ սովորություն է եղել հիվանդատես գնալու ժամանակ խնձոր տանելը։ Ընդհանրապես քաղցր սորտերի պտուղները ուժեղացնում են սիրտը, օգնում ստամոքսին, փորացավին, իսկ թթուն գործադրվում է ջերմության, թունավորվելու և կարճահարի դեմ։ Եթե եփած խնձորը ծեծեն ու դնեն աչքին լավացնում է տեսողությունը և ցավը կտրում։ Տերևների քամուկն էլ օգնում է նոր առաջացած տաք ուռուցքներին։

Տանձենի։ Մշակության մեջ հայտնի են տանձենու շատ սորտեր։ «Լավն Շահ արմուտը և Սինին է»։ Սրանց պտուղները խոշոր են, քաղցր, հյութալի, զովացնող։ Տանձը կապում է փորը, օգնում թորախտի բուժվելուն, ուժեղացնում սիրտը և ստամոքսը։ Սերմերը ճիճվահան միջոց են։ Տանձը պետք է ուտել անպայման ճաշից հետո։

Սալորենի։ Հայտնի են սալորենու սպիտակ, դեղին և սև գույնի պտուղներով սորտերը։ Լավն այն է, որ խոշոր լինի և քաղցր։ Սալորենու պտուղները օգտագործելու դեպքում օգնում են երիկամներում եղած քարին, իջեցնում օրգանիզմի ջերմությունը, բայց ստամոքսը թուլացնում է, փայծաղը վնասում։

Ամիրդովլաթ Ամասիացու «Անգիտաց անպէտ» աշխատությունը արժեքավոր է ոչ միայն պտղատու տեսակների ունեցած բուժիչ նշանակության, այլև պտուղների սորտագիտության պատմության տեսակետից։ Այդ առումով ուշագրավ է այն, որ դեռևս XV դարում ակնարկվում են դեղձենու ճղովի ու լոռ, ծիրանենու դեղնամիս և սպիտակամիս, սալորենու սպիտակ, դեղին ու սև, նռենու թթու և քաղցր սորտերը։ Ամիրդովլաթը հիշատակում է նույնիսկ տանձենու Սինի սորտը, որը անվիճելիորեն հաստատում է նրա տեղական ծագումը։

Մեկ հետաքրքրող թեմայի վերաբերյալ արժեքավոր տվյալներ կան XVII դարի մատենագիր Հակոբ Կարնեցու «Տեղագիր վերին հայոց» խորագիրը կրող աշխատության մեջ։ Կարնեցու ապրած ժամանակաշրջանում Բարձր Հայք (Էրզրումի) նահանգը ունեցել է 23 գավառ։ Այդտեղ այգեգործությունը զարգացած էր Ալաշկերտ, Դարանաղյաց, Դերջան, Եկեղյաց, Իշխանաձոր, Խորձունյաց գավառներում։ «Զորն իշխանանիստ ունի բազում այգիք, բուրաստանք, պտուղ ծառոց և գինի քաղցրահամ»,— գրում է հեղինակը։ Այստեղ «լինի տանձ և առաւել խնձոր զարմանալի հոտով և համով... որ մեկն անչափ մեծ է, որ Բճ

[1] Ընագրում ասված է թեզ, որը այժմյան հասկացողությամբ պետք է ընդունել տվյալ տեսակին պատկանող սորտը։

(200) գրամ կշռէ. գունն կարմիր կամ սպիտակ յոյժ, որ հանապազ Ստանպոլ և դրունս մեծամեծ ընծայ մատուցեալ լինի, որ անվամբ Շահալմասի ասեն»։ Այնուհետև շարունակում է. այստեղ լինում են խաղող, ծիրան, ընկույզ, նուշ, կաղին, նուռ, ձիթապտուղ, արմավ, փշատ, չամիչ, որոնցով ամբողջ տարին շուկաները լիքն են։

Ինչպես տեսնում ենք, Հակոբ Կարնեցու աշխատության մեջ նկարագրված է խնձորենու Շահալմասի սորտը։ Խոսվում է հիշյալ սորտի պտուղների մեծության, կշռի, գույնի, համի և հոտի մասին։ Սա պտղատու բույսերի սորտերի ուսումնասիրության տեսակետից բավական արժեքավոր է և մի քայլ ավելի առաջ է նախորդ հեղինակների նկարագրություններից։

Վերջապես հաջորդ ուշագրավ աղբյուրը գյուղատնտես Ա. Աթանասյանի «Երևանի նահանգի բուսականությունը» գիրքն է, որը հրատարակվել է 1880 թվականին։ Այստեղ գյուղատնտեսական մի շարք բույսերի հետ միասին որոշ տեղ է հատկացվում նաև պտղատու տեսակներին։ Ճիշտ է գրքում պտղատու կորիզավոր, հնդավոր, ընկուզավոր տեսակները դասավորված են խառը և միևնույն տեսակի կազմում սորտերի նկարագրությունները տրված են շատ համառոտ, բայց այն իր տեսակի մեջ բավական հետաքրքիր է։ Այդ հետաքրքրությունը նախ կայանում է նրանում, որ գրքում հեղինակը առաջին անգամ հայերեն լեզվով նկարագրում է պտղատու 14 տեսակների մոտ 40 սորտեր։ Երկրորդ՝ որ պտղատու բույսերի սորտագիտությամբ զբաղվող գիտական աշխատողները այդ գիրքը կարող են օգտագործել որպես սկզբնաղբյուր։ Ստորև բերում ենք Ա. Աթանասյանի հիշատակած տեսակների և նրանց սորտերի նկարագրությունների մի քանի օրինակներ։ «Ծառերը Երևանի նահանգում բաժանվում են երկու դասակարգի,— գրում է նա,— պտղատու և անպտղատու։ Պտղատու ծառերի մեջ առաջին տեղը կարող է բռնել ծիրանենին։ Ծիրանենին բավական դիմացկուն լինելով, կարող է սպրել հիսունից մինչև ութսուն տարի։ Նա սիրում է կրախառն հող, խմում քիչ ջուր, աճում բավականին ուժեղ և արձակում շատ ճյուղեր։ Փայտը բավականին կարծր լինելով, տալիս է լավ ածուխ։ Ծիրանը ունի շատ սորտեր։ Դրանք են Սպիտակ ծիրանը, Աղջանաբաթը, Գեոգջանաբաթը, Բաղամարիկը, Գյառգյառը, Նովրաստը»։

Ա. Աթանասյանի գրքում դեղձենիներից հիշատակվում են Կլոր նարնջին, Զվաձև նարնջին, Սպիտակ լոձը, Կարմիր լոձը, Ճղովին։ Տանձենիներից՝ Մալաչան, Սինին, Զմեռնուկը և մի շարք տեսակների բազմաթիվ սորտեր։

Ահա հիմնականում սրանք են V—XIX դարերի հայ գրականության տվյալները պտղատու տեսակների և նրանց կենսաբանական առանձնահատկությունների վերաբերյալ։ Եթե մի անգամ ևս աչքի անցկացնենք այդ բոլորը, ապա կտեսնենք, որ V—X դարի հեղինակները նշել են միայն Հայաստանում մշակվող պտղատու տեսակները։ Մինչդեռ XV—XVI դարերի գրողները հիշատակում են արդեն իրենց ժամանակաշրջանում տարածված սորտերը։ Վերջապես XVII դարից հետո հանդիպում ենք պոմոլոգիական որոշ նկարագրությունների, որը բավական մոտ է ժամանակակից մասնագիտական գրականության տկզբունքներին։

Խաղողագործության, գինեգործության և
պտղաբուծության ինստիտուտ

Ստացված է 13.XII.1971 թ.

Э. С. МОРИКЯН

ПОРОДЫ ПЛОДОВЫХ КУЛЬТУР И ВОПРОСЫ ИХ БИОЛОГИИ В АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЕ V—XIX ВЕКОВ

Резюме

Плодовые растения в Армении культивируются с давних времен. При археологических раскопках выявлены семена винограда, абрикоса, персика, черешни, которые имеют 6000-летнюю давность и относятся к энеолиту.

Ряд армянских авторов подтверждает развитое плодоводство в прошлом. Первое упоминание об этом относится к V веку. В частности, в «Истории Армении» Агатангелоса, из плодовых культур приводятся персик, яблоня, груша, айва, кизил, грецкий орех, миндаль, гранат, инжир, шелковица. У Мовсеса Хоренаци (V век), Амирдовлата Амасиаци (XV век), Акопа Карнеци (XVII век) и других имеются краткие описания плодовых культур и их сортов.

Армянскому поэту Григору Нарекаци в X веке уже были известны вопросы ассимиляции листьев у плодовых деревьев, а ученые Григор Татеваци (XIV век) и Оганес Ерзнкаци (XV век) знали о важности воздуха, почвы, воды, температуры, света и питания для деревьев.

Авторы V—X веков отмечали в основном породы. Между тем авторы XI—XVII веков упоминают и сорта абрикоса, персика, айвы, яблони, груши, распространенные в стране.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ագաթանգեղոս *Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1914, էջ 324։*
2. Անանիա Շիրակացի *Աշխարհացոյց, Երևան, 1944։*
3. Ամիրդովլաթ Ամասիացի *Անգիտաց անպետ, Վիեննա, 1926։*
4. Գրիգոր Նարեկացի *Տաղեր, Երևան, էջ 50, 1957։*
5. Գրիգոր Տաթևացի *Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, էջ 212, 1729։*
6. Հակոբ Կարնեցի *Տեղագիր վերին Հայոց, Վաղարշապատ, էջ 12, 18, 1903։*
7. Մովսես Խորենացի *Մատենագրութիւն, գիրք Բ, Վենետիկ, էջ 464, 1865։*
8. Մնացականյան Ա. Շ. *Բուսաբանական մի կարևոր տեղեկություն Գ. Նարեկացու մոտ, ՀՍՍՀ ԳԱ բնական գիտությունների «տեղեկագիր», 9, էջ 91, 1946։*
9. Տիմիրյազև Կ. Ա. *Բույսի կյանքը, Երևան, 1948։*
10. Տեր-Պողոսյան Ավ. *Բիոլոգիական մտքի զարգացումը Հայաստանում, Երևան, էջ 36, 68, 1960։*